ՊԱՐՍԻՑ ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀԻ ԳՐՈՒԹԻՒՆՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻ։

Հասցէ ի նայեացքն բարեկամական մեծազօրն եւ ամենապայծառ քրիստոնէական քահանայապետաց Քահանայապետին վարդապետաց Վարդապետին Մկրտիչ Ա. Հայրապետին ամենայն Հայոց՝ որ ի սփիւռս աշխարհի․

Յայտնում ենք, որ Նորին Դրախտավայելչութիւն՝ քրիստոնէից մեծազօրն և պանծալի Քահանայապետն, շնորհիւն Աստուծոյ և ըստ ջերմ ցանկութեան Մեր սրտի աղերսանաց, միշտ կը լինի յաջողապէս լաւ և նպատակահամ գրութեան մէջ։

Ձերդ Սրբութեան երկու բարեկամական նամակները, որոնցից մէկը վերաբերում էր Ն. Սրբազնութիւն Սահակ եպիսկոպոսի Ատրպատականի Հայոց առաջնորդութեան և միւսը Ն. Սրբազնութիւն Մաղաքիա եպիսկոպոսի՝ Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց առաջնորդութեան—արժանացան Մեր բարձր ուշադրութեանը։

Այդ նամակները, որ արտայայտում էին Ձերդ դրախտավայել Վեհութեան անկեղծ զգացմունքները և շեշտում Մեր նահատակ Արքայից արքայ ծնողի ողորմած շնորհները այս պետութեան հայերի վերայ, նաև մեր համապարփակ ողորմածութեան մասին — կարդացուեցան։

Յանդորրացումն Ձերդ դրախտավայել սրտի, յայտնում ենք, որ այս պետութեան համայն ժողովրդի հանգստութիւնն և անդորրութիւնը մեր ամբողջ հոգածութեան առարկան է։ Մեր նահատակուած հօր անկեղծ վարմունքը մեզ առաջնորդ ունենալով, Ամենամեծն Աստուծոյ այն ենք ակնկալում, որ Նա Մեզ երջանկացնէ, հասցնելով այդ նպատակին, որ և կարողանանք այս պետութեան ամէն ծայրերում բընակուող ժողովրդոց՝ ինչ ցեղի կամ կրօնի որ պատկանում լինէին նրանք, մեր յատուկ շնորհների միջոցաւ և աշխարհ պահպանողների պարտականութիւն եղող մտադրութեամբ հասցնել իրենց անդորր աշխատանքի պտուղները վայելելու նպատակին։ Յուսալից ենք այնպիսի ձևով այս ս. բաղձան մտադրութիւնները գործադրել և տարածել, որ կարողանանք անման Աստուծոյ գահի առաջ բարձր ի գըլուխ լինել։

Ըստ Ձեր դրախտավայել Վեհափառութեան յորդի խնդրին, հարկ եղած հրամանագրերը ուղարկուեցան պէտք տեղերը, որպէս զի Նոցին սրբազնութիւններին ճանաչելով իրենց պաշտօնների մէջ, նըրանց պատիւն ի նկատի ունենան և նրանց այն խնդիրները, որ վերաբերում լինէին կրօնական հարցերին, ի գործ դրուին։ Բացայայտ է, որ շնորհիւ Ձերդ Վեհ. բարի ընտրութեան, այդ եպիսկոպոսները հե-

տևելով իրենց նախորդներին՝ չպիտի շեղուեն պետութեան և ժողովրդին բարիք բերող Ճանապարհից։

Օգտուելով այս առթից և աղօթելով, որ բարձրեալն Աստուած պարգևէ Ձերդ Վեհափառութեան երկար կեանք՝ հայրապետութեան գահի վերայ, խնդրում ենք նաև որ Ձեր աղօթքների և պաշտամանն միջոցներին Մեզ չմոռանաք։

(Կնիք անձնական Շահի)
Շահի ձեռքով գրուած.
Ստոյգ է. Շնորհիւն Աստուծոյ
ՇԱՀՆՇԱՀ ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ ՂԱՋԱՐ
Ինքնակալ Պարսկաստանի.

Գրեցաւ ի մայրաքաղաք
Թեհրան
Արքայական պալատում
Ջէմադ-ուլ-էվվալի ամսի 6
1316 թ.ի.
Մեր թագաւորութեան 3-րդ տարին.

## ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

### ՀԱՒԱՏՈՅ ՄԱՐՏԸ.

«Եւ այժմ, որ ունի քսակ՝ առցէ, նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունիցի, վաճառեսցէ զհանդերձ իւր և գնեսցէ իւր սուսեր»։

Ղուկ. Ի. 36։

ՂՈՒԿԱՍՈՒ աւետարանի մէջ շատ կան պատմուածքներ, որոնք միայն նորան յատուկ են, միւս աւետարանների մէջ չեն կրկնուում. և գրեթէ բոլոր այդ պատմուածքները մի սուր կողմ ունին՝ մի ինքնուրոյն և խիստ գնահատելի աւետարանական ճշմարտութիւն են պարզաբանում։ Դրանցից մէկն է, ահա մեր աչքի առաջ, որ կարելի է ասել մեր Փրկչի վերջին կտակն է ներկայացնում՝ խորհրդաւոր ընթրիքից յետոյ նախքան դէպի Գեթսեմանի և դէպի Գողգոթա տանող փշալից ճանապարհի վերայ ոտք կոխելը, Իւր աշակերտներին վերջին անգամ տուած սիրայորդոր պատուէրների ամփոփումը։ Մենք տեսնում ենք այստեղ, թէ որչափ թիւր է և անիրաւացի այն կարծիքը, որով աւետարանի հատ հատ խօսքեր, տառացի կերպով ըմբռնած՝ առանց նորա յարակից հանգամանքները, մոռանալով թէ ամբողջ աւետարանի ոգին ի նկատի առնելու, համարում են ամէն տեղի և ժամանակի յարմար սկզբունք, և այդպիսով ամենատարօրինակ հետևութիւններ հանում նոցանից։ Մի ժամանակ Քրիստոս Իւր աշակերտներին քարոզութեան ուղարկելով պատուիրել էր նոցա ոչ մի պաշար չվերցնել հետները և ոչինչ հոգս չքաշել. շատ պարզ էր նոցա կոչումը, ըստ այնմ և պարզ յարաբերութիւն պէտք է ունենային ամէնքի հետ ու պարզ ընդունելութիւն գտնէին ամէն տեղ։ Խաղաղ ժամանակ էր այդ, նոցա Վարդապետը դեռ յարգուած ու սիրուած էր բոլորից. հրեայ ժողովրդի համար մի մարգարէ էր Նա, որ խօսում և գործում էր ինչպէս ոչ մէկը նոյն իսկ մեծ մարգարէներից, և առարկայ էր ուրեմն ամենաջերմ ակնկալութիւնների. իսկ նոքա եկել էին աւետարանելու, թէ Իսրայէլի դարերէ ի վեր սնուցած այդ ակնկալութիւնների կատարման ժամանակը մօտ է. բնական է՝ ուրեմն, որ ամէն դուռ բաց գտնէին իրենց առաջ և յաջողութեամբ ու առանց արգելքի գլուխ հանէին իրենց առաքելութեան գործը՝ առատ վարձատրութիւն ևս ստանային իրենց աշխատութեան համար։ Ժամանակը բոլորովին ուրիշ էր այժմ և հանգամանքների փոխուելու հետ նոցա պահանջներն ևս պէտք է փոխուէին՝ պէտք է փոխուէր նոցա ամբողջ գործունէութեան եղանակը։ Նոքա հանդէս պէտք է գային շուտով իբրև հետևողներ մի յանցաւորի, որին հրէից օրէնքը դատապարտել էր և այդ օրէնքը բացատրողների ու-